ԿՈԴ
050.0012 Ն. 04.02.20

4 փետրվարի 2020 թվականի թիվ 12-Ն

ԲԱՆԿԵՐԻ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱԿԱՑԻԿԼԻԿ ՇԵՄԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(2019 թվականի չորրորդ եռամսյակ)

Նպատակ ունենալով ամրապնդել բանկային համակարգի ֆինանսական կայունությունը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 54. 1-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2019 թվականի փետրվարի 4-ի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման կարգով»՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո ր ո շ ու մ է .

1. Բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմը սահմանել ռիսկով կշռված ակտիվների 0%-ի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ **Արթուր Ջավադյան**

2020 թ. փետրվարի 10
Երևան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Կապիտալի հակացիկլային շեմի (2019թ. չորրորդ եռամսյակ)

2020 թվականի փետրվարի 4-ի նիստում ԿԲ խորհուրդը որոշեց կապիտալի հակացիկլիկ շեմը սահմանել ռիսկով կշռված ակտիվների 0%-ի չափով:

Համաձայն «Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման» կարգի 12-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը յուրաքանչյուր եռամսյակ սահմանում է կապիտալի հակացիկլային շեմի սահմանաչափը (այսուհետև՝ ԿՀԲ): Կենտրոնական բանկը ԿՀԲ-ն սահմանելիս առաջնորդվում է «Կապիտալի հակացիկլիկ շեմի հիմքում ընկած ընդհանուր մեթոդաբանությունը» փաստաթղթի դրույթներով, համաձայն որի, ԿՀԲ չափը սահմանելիս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համար հիմք են հանդիսանում Բազել III-ի մեթոդաբանությամբ գնահատված վարկեր/ՀՆԱ ցուցանիշի ճեղքվածքը, համակարգային ռիսկի զարգացումները բնութագրող ֆինանսական ցիկլի ինդեքսը և վաղ ահազանգման այլ ցուցանիշներ:

Կապիտալի հակացիկլիկ շեմի վերաբերյալ որոշումը կայացնելիս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն առաջնորդվել է հետևյալ փաստերի համապարփակ վերլուծությամբ.

1. 2019թ. երրորդ եռամսյակի ընթացքում մասնավոր հատվածին տրամադրված վարկեր/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 63.3%[1]: Այս ցուցանիշի համար հաշվարկված ճեղքվածքը (վարկեր/ՀՆԱ-ի տարբերությունը իր երկարաժամկետ տրենդից) նախորդ եռամսյակի համեմատ գրեթե չի փոխվել, և համաձայն Բազելյան կոմիտեի մեթոդաբանության, դեռևս բավարար չէ ԿՀԲ-ի դրական սահմանաչափ կիրառելու համար:
2. 2019թ. երրորդ եռամսյակի ընթացքում պահպանվել են նախորդ եռամսյակում գրանցված սպառողական և հիփոթեքային ոլորտների վարկավորման բարձր աճի տեմպերը: Անշարժ գույքի շուկայում ևս նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ պահպանվել է անշարժ գույքի գների բարձր աճի տեմպը: Վերոնշյալ ոլորտներում վարկավորման աճի նման միտումների շարունակական պահպանումը հասցեագրելու նպատակով ՀՀ ԿԲ-ը նախատեսում է ներդնել իր գործիքակազմով նախատեսվող համապատասխան գործիքներ: Մասնավորապես՝ 2020թ. առաջին կիսամյակի ընթացքում ԿԲ-ը նախաձեռնել է հավաքագրել պարտք/եկամուտ և պարտք/գրավ հարաբերակցությունների մասով հաշվետվական ձևեր, որոնց միջոցով հավաքագրված տեղեկատվությունը հիմք կհանդիսանա հետագայում առավել ճշգրիտ և արդյունավետ կերպով հասցեագրել

[1] Ֆինանսական հատվածի կողմից տնտեսությանը տրամադրված վարկային պորտֆելի մեծությունն է, ներառյալ լիզինգը և ֆակտորինգը

վարկավորման առանձին ոլորտներում (հիփոթեքային, սպառողական) ռիսկային հնարավոր զարգացումները:

3. Համաձայն «Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման կարգի», 2020թ. հունվարի 1-ից ներդրվում է առևտրային բանկերի կապիտալի պահպանման բուֆերը ռիսկով կշռված ակտիվների 0,5 տոկոսի չափով: Միևնույն ժամանակ, համակարգային նշանակություն ունեցող բանկերի համար սահմանվում է հավելյալ 0,5 տոկոս համակարգայնության շեմ: Վերը նկարագրված գործիքները ըստ էության իրենցից ներկայացնում են կապիտալի լրացուցիչ պահանջ, որոնք նպաստելով բանկային համակարգի կայունության ամրապնդմանը, կարող են միաժամանակ սահմանափակել վարկավորման շուկայի ռիսկային ընդլայնման հնարավորությունները:

Հաշվի առնելով վերոնշյալ փաստերի համապարփակ վերլուծության արդյունքները՝ **Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը նպատակահարմար է համարում կապիտալի հակացիկլիկ բուֆերը թողնել անփոփոխ՝ 0%:**

Ապագայում, ֆինանսական համակարգում ռիսկերի հնարավոր կուտակումների պարագայում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը չի բացառում ԿՀԲ պահանջվող մակարդակի վերանայումը աճի ուղղությամբ: